



ԸՆԹԵՐՑԱՐԱՆ 1

Մարիտա Միննյան
Արդա Պերրոսյան

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ


Մայրենիի գիրք-տետր
առաջին դասարանցիների
համար

Նկարիչ՝
Նանա Սահակյան



«ՆՈՐ ԴՊՐՈՑ»
հրատարակչություն

ԵՐԵՎԱՆ
1997



Մարիետա Մինոնյանի
Աիդա Պետրոսյանի

ԸՆԹԵՐՅԱՐԱՆ

Մայրենիի գիրք-փետր
ստաջին դասարանցիների համար,
68 էջ

Եր., «Նոր դպրոց», 1997թ.

© «ՆՈՐ ԴՊՐՈՑ»
հրատարակչություն
1997

© Ձևավորումը՝
Նանա Սահակյանցի
1997

Ես գրել ու կարդալ գիտեմ

Ես պատմում եմ իմ մասին

Իմ անունը _____ է:

Իմ ազգանունը _____ է:

Իմ ծննդյան օրը _____ է:

Իմ հայրիկը _____ է:

Իմ մայրիկը _____ է:

Սովորում եմ _____

Իմ ուսուցիչը _____ է:

Իմ հասցեն՝ _____


Մտերմորեն սիրահանում եմ

ի լիճի կրիկը

Շատ կարգապահ եմ



ՄԱՆՈՒՇԱԿ



- Ասա՛ ինձ, մանուշակ, ինչո՞ւ ես այդպես շուտ դուրս եկել մեն-մենակ: Դաշտերում ոչ մի տեղ դեռ չի բացվել քեզ նման մի ծաղիկ:
- Ես չունեմ մյուսների գեղեցիկ հասակը ու նրանց հագուստը՝ զարդարուն ու շքեղ: Դուք ինձ չեք տեսնի, եթե ես երևամ նրանց հետ միատեղ:



Ո՞ր ծաղիկներն ունեն գեղեցիկ հասակ, զարդարուն ու շքեղ հագուստ: Գրի՛ր այդ ծաղիկների անունները:

Ինչպիսի՞ն է մանուշակը: Ճիշտ պատասխանի տակ գծի՛ր:

մեծ փոքրիկ զարդարուն

Ինչի՞ համար են ծաղիկները:

Լրացրո՛ւ բաց թողնված բառը.

- Այ՛ մանուշակ, ի՞նչ սիրուն ես:

- Եթե սիրուն եմ, ինչո՞ւ _____:

Մանուշակի գիրք-փերթ
ատափն դասարանիցների համար

Աչքերդ կկոցի՛ր ու նայի՛ր արևին կամ վառվող լամպին:
Հետո գրի՛ր, թե ինչ ես տեսել:

Եր. «Նոր դպրոց», 1997թ.

© 1997 թ.

Իրատարակություն

1297

Չեմբուր

Երևան



ԵՂԵՎՆԻՆ

Մի ծեր մարդ գալիս է եղևնու մոտ: Եղևնին ասում է նրան.

- Հեռու՛ մնա ինձնից, հոտս կվնասի քեզ:

Ծերունին օրհնում է եղևնուն, որ նա միշտ կանաչ մնա:

Ծերունին ինչո՞ւ օրհնեց եղևնուն:

Ծերունին եղևնուն օրհնեց, որովհետև եղևնին _____:



Գլխիդ վերև՝
Հազար տերև:

ծառ



Մի պապիկ կա՝
Հազար թուռ է շալակել:



Ավարտիր նախադասությունը.

չի լինի. կլինի

Շատ կարդացողը խելացի _____:



ԵՐԿՈՒ ԶԱԳՈՒԿ

Երկու ձագուկ մի հասկ գտան: Հասկում շատ հատիկներ կային: Ազահ ձագուկները բռնեցին հասկի երկու ծայրերից ու սկսեցին քաշել՝ մեկը իր կողմը, մյուսը՝ իր: Հասկը այնքան քաշքշեցին, որ երկուսն էլ ընկան: Այդ ժամանակ ծիտը վրա հասավ, հասկը ճանկեց ու թռավ:



Ինչպիսի՞ն էին ձագուկները: Ծիտ պատասխանն ընգծիր.
ընկերասեր ազահ ուրախ



Լրացրու:

Ծիտը ծիծաղեց ձագուկների վրա ու ասաց.

Այլը՛վանդակները լրացրու:
 Դետտ գրիր, թե ինչ ես տեսել.

Ծուռոսը կենդանի, որը չմռսեր բուն է մըրնում

Խորամանկ կենդանի, որը սիրում է հավ ու փեղ

Փշուր կենդանի, որը հաղթում է օջիհ

Գարնան առաջին ծաղիկը

Ընկրանի կենդանի, որը մուկ է բռնում

Կնճիք ունեցող հսկա կենդանի



ՓՈՔՐԻԿ ՏՂԱՆ

Արևը մայր էր մտնում:

Փոքրիկ տղան հարցրեց.

- Հայրիկ, արևը որտե՞ղ է
քնում:

- Իր մոր գրկում:

- Արևի մայրը ո՞վ է:

- Երկինքը:

- Իսկ արևը ինչո՞վ է

ծածկվում:

- Ամպով:

Փոքրիկ տղան ուրախացավ.

- Եի՛շտ: Վաղը արևին կհարցնեմ, թե այս գիշեր չի՞ բացվել:



Գտիր բոլոր տարբերությունները:

Այսպես՝

Արևի մայրը ո՞վ է: Արևի մայրիկը ո՞վ է:

մայր - մայրիկ

1. Արևը մայր էր մտնում: Արեգակը մայր էր մտնում:

2. Փոքրիկ տղան հարցրեց: Պսպիկ տղան հարցրեց:

Ամպը արևի ի՞նչն է: Եի՛շտ պատասխանն ընդգծիր.

մահճակալը վերմակը ներքնակը բարձր



ԱՐԵՎԸ

Արևը, առյուծի մեջքին նստած, թռչում է երկնքում:

Առյուծը իր մեծ թրով պաշտպանում է նրան:

Արևը երեկոյան գնում - հանգստանում է մոր գրկում:

Գիշերը երկնքում ի՞նչ ես տեսնում:

Լուսինը երկնքում ի՞նչ է անում:

Աստղերը երկնքում ի՞նչ են անում:




Քույր ու եղբայր են.
Մեկն առափոտն է զարթնում,
Երեկոյան՝ քնում,
Մյուսը երեկոյան արթնանում է,
Առափոռյան՝ քնում:

- ր - գ - կ Լ - ս - ն ,



Մի հովիվ կա՝
Ոչխարներին գիշերն է արածեցնում:

Լ - ս - ն, - ստղ - ր




ԿՐԱԿԻ ԳՈՒՆԴԸ

Արևը կրակի հսկա գունդ է:

Դրա համար էլ նա միշտ լույս և տաքություն է տալիս: Արևը երկնքում գնդակի չափ է երևում, որովհետև մեզնից շատ-շատ հեռու է:


Առանց արևի մենք չենք կարող ապրել:



Քո կարծիքով ի՞նչ կլիներ, եթե արևը մոտ լիներ:



Մի խնձոր կա՝
Կեսը սպիտակ է,
Կեսը՝ սև:



գ - շ - ր - ց - ր - կ

Մազնիսը մոտեցրո՛ւ տարբեր առարկաների: Թվիր՝ ի՞նչ է բռնում քո մազնիսը:

Թվիր՝ ի՞նչ չի բռնում քո մազնիսը:

Գրիր՝ էլ ի՞նչ կարող ես անել մազնիսով:



Իմ հարազատները

Իմ հոր եղբայրը իմ հորեղբայրն է:

Իմ հոր քույրը իմ _____ է:

Իմ հոր մայրը իմ _____ է:


Իմ հոր հայրը իմ _____ է:

Իմ մոր եղբայրը իմ _____ է:

Իմ մոր քույրը իմ _____ է:

Իմ մոր մայրը իմ _____ է:

Իմ մոր հայրը իմ _____ է:



Թուղթը մանր կտորների բաժանիր ու լցրո՛ւ մի մեծ թղթի վրա:

Գրիչիդ մի ծայրը մտցրո՛ւ մազերիդ մեջ ու մի լավ շփիր:

Հիմա գրիչիդ այդ ծայրը մոտեցրո՛ւ թղթի կտորտանքին: Ի՞նչ եղավ:

Գրիչիդ ծայրը շփիր մազերիդ մեջ:

Փորձիր դրանով թղթի՝ տարբեր չափերի կտորներ բռնել:

Հետո գրիր, թե ինչ է լինում:



ՔԱՄԻՆ

- Ուտուո՛ւ:

Քամին է, քամին,

Տե՛ս անգգամին,

Բերան չունի՝ փչում է,

Թևեր չունի՝ թռչում է,

Ձեռքեր չունի՝ քաշում է,

Իմ փոքրիկին բշում է:



Քամին ի՞նչ չունի:

Ինչպիսի՞ն է քամին: Ծիշտ պատասխաններն ընդգծիր.

ուժեղ թույլ չարահնի հանգիստ

Շարունակիր.

Թևերով թռչում են:

Գրիչով _____ :

Գդալով _____ :

Մուրճով _____ :

Գանակով _____ :

Վերելակով _____ :

Հեռախոսով _____ :

Ավարտիր նախադասությունը:

հաշում է, չի հաշում

Շունը իր պիրոց վրա _____ :



ՕԴ

Չորս կողմնի նայիր: Տեսնո՞ւմ ես օդը: Ո՞չ: Հիմա փորձիր բռնել: Չի՞ ստացվում: Դու օդը զգում ես, երբ վազում ես կամ հեծանիվ ես քշում:

Քամին օդի շարժումն է: Առանց քամու ամպերը միշտ հավաքված կլինեն ծովերի, գետերի, լճերի վրա: Եթե քամին չլիներ, անձրևները միայն ջրերի վրա կգային:



Փչես՝ կգնա,
Բայց բռնել չես կարող:

Առանց ոտքի,
Առանց ձեռքի՝
Դռներ է բացում:

- ա - ի



ԱՄԵՆԱ-ԱՄԵՆԱ...

Բաց թողնված բառը լրացրու:

- Այ ամպ, ի՞նչ ուժեղ ես:

- Բա որ ուժեղ եմ, անչրևը ինչո՞ւ է միջովս _____



ԱՌԱՋԻՆ ՁՅՈՒՆԸ

- Վա՛յ, մայրի՛կ ջան, տե՛ս,
Բակն ու դուռը ի՛նչ
Ինչքա՛ն սպիտակ
Թիթեռ է գալի...
Էսքան շատ թիթեռ
Չեմ տեսել ես դեռ:



- Չէ՛, իմ անուշիկ,
Թիթեռներ չեն էդ,
Թիթեռներն անցան
Ծաղիկների հետ:
Էդ ձյունն է գալի,
Փարսիլն է ձյունի,
Որ կարծես սպիտակ
Թիթեռնիկ լինի:



Լրացրո՛ւ բաց թողնված բառերը:

-Չէ՛, իմ անուշիկ,
Թիթեռներ չեն էդ,
Թիթեռներն անցան

Էդ ձյունն է գալի,
Փարսիլն է ձյունի,
Որ կարծես _____

լինի:

Թիթեռները ինչո՞ւ գնացին ծաղիկների հետ:

Թիթեռները գնացին ծաղիկների հետ, որովհետև _____

Նախադասությունները լրացրո՛ւ:

Ձյան փարսիլը նման է թիթեռնիկի:

Տունածառը նման է _____:

Արևը նման է _____:

Ապրիլը նման էին _____:



ԱՆՁՐԵՎ



Տես՞ լ ես, թե տաքացող ջրից ինչպես է գոլորշի բարձրանում: Ա՛յ, երբ արևը տաքացնում է ծովերի, գետերի, լճերի ջուրը, նրանցից էլ է գոլորշի ելնում: Այդ գոլորշին բարձրանում է վեր, սառչում է և դառնում ջրի մանրիկ կաթիլներ: Վերևում հավաքված ջրի կաթիլներին ամպեր ենք ասում: Հետո այդ կաթիլները իրար են միանում, մեծանում են, ծանրանում ու թափվում են ներքև: Իսկ մենք ասում ենք՝ ամպեց ու անձրև եկավ:



Ամպը ի՞նչ է:

Լրացրո՛ւ:

Ծով, գոլորշի, ամպ, _____:

Ծով, գոլորշի, _____, անձրև:



Տարվա եղանակները



Միանք տարվա եղանակներն են:
Ամիսների անունները գրիր իրենց տեղերում:



ԳՍՐՈՒՆ



ԱՍՏՈՒ


Մեպտեմբեր
Հոկտեմբեր
Նոյեմբեր

Դեկտեմբեր
Հունվար
Փետրվար

Հունիս
Հուլիս
Օգոստոս



ԱՇՈՒՆ



ԶՄԵՐ

Մարտ
Ապրիլ
Մայիս

ԿԱՄԱԿՈՐ ԱՅԾԻԿՆԵՐԸ



Երկու կամակոր այծ մի նեղ կամուրջի վրա հանդիպեցին: Երկուսը միասին չէին կարող անցնել կամրջով. պետք է նրանցից մեկը մյուսին ճանապարհ տար:

- Դու ե՛տ գնա, որ ես անցնեմ,- ասաց մի այծիկը:

- Ինչո՞ւ դու ետ չես գնում, որ

ինձ ես ասում,- պատասխանեց մյուսը:

Այծիկները վիճեցին, ճակատ ճակատի խփեցին, սայթաքեցին ու բնական ջուրը:

Ինչո՞ւ այծիկները չէին կարող միասին անցնել կամրջով:

Այծիկները չէին կարող միասին անցնել կամրջով, որովհետև




Լրացրու:

Այծիկները կամակոր էին, որովհետև ոչ մեկը չէր ուզում

Այծիկներին մի խորհուրդ տուր:

Այ կամակոր այծիկներ, _____



Լրացրու.

- Այ ոչխար, ի՞նչ քաջ ես:

- Բա որ քաջ եմ, ինչո՞ւ է գայլը ինձ _____



ԱՐՏՈՒՅՏՆ ՈՒ ԵՐԿԻՆԵՐԸ

Արտույտը վախենում էր, որ երկինքը փուլ կգա: Նա պատկեց մեջքի վրա, ոտքերը վեր տնկեց ու աշխատեց դեմ տալ երկնքին:

Տեսնողները ծիծաղեցին նրա վրա և ասացին.

- Այ ճնճողուկ, դու ո՞նց կարող ես քո ծղոտե տոտիկներով պահել երկինքը:
- Ես իմ բաժին երկինքն եմ պահում:



Փորձիր բացատրել.

Ժողովե ցուպիկներ - _____




Տրված բառերը գրիր ճիշտ տեղերում.

կբանդվի բարձրացրեց

Արտույտը վախենում էր, որ երկինքը _____:

Նա ոտքերը _____ ու աշխատեց դեմ տալ երկնքին:

Վերջում դու ի՞նչ կասես արտույտին:



Ի՞նչ են
արել

Ի՞նչ են
անելու



Երևի _____

Այսօր _____

Վաղը _____

Պատմիր այսօրվա եղանակի մասին:

Առավոտյան _____


Կեսօրին _____

Երեկոյան _____



ԱՐՏՈՒՏԻԿ

Արտուտիկ,
Նախշուն տոտիկ,
Իջնեն կալեր
Գողտիկ-մողտիկ,
Ընտրեն քարեր,
Ուտեն կուտիկ,
Կծվյալան
Կլթիկ-կլթիկ:



Ինչպիսի՞ն է արտուտիկի տոտիկը:

Արպուտիկի փոփիկը _____ է:

Շարունակիր:

Արպուտիկը քարուն զնում է կալեր, կուտիկ է ուտում ու _____ է:

Շարունակիր.

իջնել - բարձրանալ


քափել - հավաքել

զնալ - _____

տանել - _____

ուրախանալ - _____

քնել - _____



ԱՄԵՆԱ-ԱՄԵՆԱ...

Լրացրու.

- Այ խոյր, ի՞նչ ուժեղ ես:

- Բա որ ուժեղ եմ, _____ ինչո՞ւ է ինչ արածում:



ՉԱԼ ԿԱՉԱՂԱԿԸ



Չալ կաշաղակը թռչում էր, թռչում ու ծառին
նստում: Նստում էր, նստում, պոչիկն էր շարժում:
Շարժում էր, շարժում ու երգ էր ասում:

- Կա, չէ, չկա, չէ:

Նորից թռչում էր, թռչում ու ծառին ստում:
Նստում էր, նստում, պոչիկն էր շարժում
ու երգ էր ասում:

- Կա, չէ, չկա, չէ:

Նորից թռչում էր, թռչում ու ծառին
նստում: Ծառին էր նստում,
պոչիկն էր շարժում ու երգ էր
ասում:

- Չկա, չէ, չէ...




Գրի՛ր բաց թողնված բառերը:

Չալ կաշաղակը թռչում էր, _____ ու ծառին նստում: Նստում
էր, _____, պոչիկն էր շարժում: Շարժում էր, _____ ու երգ
էր ասում:

Չալ կաշաղակն ի՞նչ է սիրում. շարունակի՛ր:

Կաշաղակը սիրում է թռչել, _____, _____:

Ինչի՞ մասին է կաշաղակի երգը՝ կա, չէ, չկա, չէ:



ԱՄԵՆԱ-ԱՄԵՆԱ...

Լրացրու.

- Ա՛յ _____, ի՛նչ համեղ ես:

- Բա որ համեղ եմ, _____



ԲԱՐԵԿԱՄԸ

Կաչաղակը մարդու բարեկամն է եղել: Նա միշտ իմացել է, թե ինչ է լինելու, և ասել է մարդուն:

Մի անգամ մարդը բարկացել է և տանից դուրս է արել կաչաղակին: Թռչունը ընկել է սար ու ձոր, բայց չի մոռացել իր հին բարեկամին: Հիմա էլ, հենց որ մի բան է իմանում, գալիս, նստում է մարդու տան պատին կամ ծառի ճյուղին և չրթչրթացնում է: Պատմում է, մինչև որ մեկը դուրս է գալիս և հաց է տալիս նրան: Դրանից հետո կաչաղակը թռչում - գնում է:



Կաչաղակը թե՞գ ի՞նչ ուրախ լուր կբերի:

ԱՄԵՆԱ-ԱՄԵՆԱ...

Լրացրո՛ւ.

- Այ _____, ի՞նչ ճարպիկ ես:

- Բա որ ճարպիկ եմ, _____



ԹՈՉՈՒՆԻ ԱՆԿՈՂԻՆԸ

Թռչունի անկողինը միշտ իր հետ է: Նրա
ներքնակը փոքի փետուրներն են: Նրա վերնակը
մեջքի փետուրներն են: Այդքան տաք անկողնով
կարելի է քնել ամեն տեղ՝ հողի, ջրի, ձյան վրա և
նույնիսկ ձյան մեջ:



Ի՞նչ թռչուններ գիտես: Գրի՛ր դրանց անունները:

Ճիշտ ավարտի՛ր նախադասությունը.

դնում են, չեն դնում

Քամքակը կրակի մոտ _____:

Փետուրներից բացի էլ ի՞նչ ունեն թռչունները:

Ի՞նչ են արել, ի՞նչ են անելու

Երեկ _____


Այսօր _____

Վաղը _____



ՈՒԺԵՂԸ

- Մուկը ուզում է մի ուժեղ ընկեր գտնել:
- Գալիս է արևի մոտ.
- Արե՛ւ, ի՛նչ ուժեղ ես:
- Արևը թե՛
- Ամպն է ուժեղ:
- Մուկը ամպի մոտ է գալիս: Ամպը թե՛
- Քամին է ուժեղ:
- Քամու մոտ է գալիս: Մա էլ թե՛
- Մարդն է ուժեղ:
- Մուկը մարդու մոտ է գալիս:
- Մարդն էլ թե՛
- Մուկն է ուժեղ:
- Որ ամենից ուժեղը էլի մուկն է, ես էլ մկան հետ ընկերություն կանեմ:



Շարունակիր:

Ամպը արևից ուժեղ է, որովհետև _____:

Քամին ամպից ուժեղ է, որովհետև _____:

Մարդը քամուց ուժեղ է, որովհետև _____:


Մուկը մարդուց ուժեղ է, որովհետև _____:

Փչած փուչիկը մի քիչ շփիր մազերիդ: Հիմա փուչիկի այդ կողմը մոտեցրու առաստաղին կամ ներկած դռանը: Գրիր, թե ինչ է լինում:

Թափանցիկ բաժակի մեջ ջուր լցրու: Գդալը դիր այդ բաժակի մեջ: Նայիր վերևից, կողքից ու գրիր, թե ինչ ես տեսնում:



ՓԻՂ



Փիղը ընկերասեր կենդանի է: Նա հասկացող է ու խելացի: Երբ մի փիղ ընկնում է փոսը, մյուսներն իրենց կնճիթներով օգնում են նրան: Եթե փղի կնճիթը վնասվում է, նա չի կարողանում ո՛չ ուտել, ո՛չ խմել: Այդ ժամանակ նորից օգնում են ընկերները: Նրանք իրենց կնճիթներով կերակրում են նրան: Փղերն իրենց հիվանդ ընկերոջը մենակ չեն թողնում, տանում են իրենց հետ:



Ինչպիսի՞ կենդանի է փիղը:

Փղերը ինչպե՞ս են օգնում իրենց ընկերներին:

ԱՄԵՆԱ-ԱՄԵՆԱ...

Լրացրո՛ւ.

- Այ _____, ի՞նչ մեծ էս:
- Բա որ մեծ էս, _____

ՔԱՉԷ Է, ԹԵ՝ ՎԱԽՍԿՈՏ



Գիտե՞ս, որ նապաստակը այնքան էլ վախկոտ չէ: Նա պառկում է մեջքի վրա և թշնամու հետ կռվում իր երկար ու սուր ճանկերով: Նապաստակը նաև խորամանկ է: Նա խառնում է իր հետքերը և խաբում է որսի շներին: Իզուր չէ, որ նապաստակի աչքերը շիլ են: Նա ոչ միայն իր դիմացն ու շուրջն է տեսնում, այլև մի քիչ էլ՝ ետևը: Ականջներն էլ են պտտվում չորս կողմ և լսում են բոլոր կողմերից եկած շշուկները:



Շարունակիր:

Նապաստակը վախկոտ չէ, որովհետև _____:

Նապաստակը խորամանկ է, որովհետև _____:

Փղերը ինչպե՞ս են օգնում իրենց ընկերներին:

ԱՄԵՆԱ-ԱՄԵՆԱ...

Լրացրու.

- Այ _____, ի՞նչ անվախ ես:
- Բա որ անվախ եմ, _____:



ԿՈՌԻՆԿՆԵՐԸ

Կը՛ռ, կը՛ռ, կռկռան
Կռունկները հա՛րռան,
Կռունկների թևի տակ
Եկավ գարուն մեր դռան:



Գրիր բաց թողած տողը.

Կը՛ռ, կը՛ռ, կռկռան
Կռունկները հա՛րռան,
Կռունկների թևի տակ

Գարունը ինչպե՞ս եկավ: Ճիշտ պատասխանն ընդգծիր.
փաթիլների հեպ մրգերի հեպ կռունկների հեպ

Կռունկները ինչո՞ւ են կռկռում:

Կռունկները կռկռում են, որովհետև _____:

Բառերից մեկը գրիր ճիշտ տեղում.

ամառ գարուն աշուն ձմեռ

Ծառը չի ծաղկում, մինչև _____ չի գալիս:

ԱՄԵՆԱ-ԱՄԵՆԱ...

Լրացրու.


- Ա՛յ _____, ի՛նչ փաթ ես:
- Բա որ փաթ եմ, _____



ՆԱՄԱԿԱՏԱՐՆԵՐ

Գիտե՞ք, որ աղավնիները կարողանում են ճանապարհը գտնել: Նրանք շատ հեռու տեղերից էլ հեռու են գալիս իրենց բույնը:

Առաջ մարդիկ աղավնիների միջոցով նամակներ էին ուղարկում իրար:



Երև աղավնին նամակներ է պանում-բերում, ուրեմն

նա _____ է:




Ի՞նչ տուն է՝

Դուրսն արձաք է, ներսը՝ ոսկի:

Քարով խփես՝ կքանդվի,

Բայց էլ չի շինվի:



ԱՄԵՆԱ-ԱՄԵՆԱ...

Լրացրո՛ւ.

- Այ _____, ի՞նչ հեղափոխություն է:
- Բա որ հեղափոխություն է, _____:

ՈՎ ԻՆՉՊԵՍ Է ՔՆՈՒՄ



- Դու ինչպե՞ս
ես քնում,
նսպաստակ:
- Ինչպես որ
կարգն է՝ պտտկամ եմ քնում:



- Իսկ դու,
կռունկ,
ինչպե՞ս ես
քնում:
- Ես կանգնած
եմ քնում:



- Դ-ո՞ւ,
արադա՞ղ,
ինչպե՞ս ես
քնում:
- Ես նստած
եմ քնում:



- Չղջի՛կ, դու
ինչպե՞ս ես
քնում:
- Ես քնում եմ
գլխիվայր
կախված:
Տեսնո՞ւմ եք,
որ ամենա-

ճարպիկը ես եմ:



Դու ունե՞ս
առային դասարանի
մաթեմատիկայի
(3 մաս) գիրքը:
Այո՞:
Սիրով ես աշխատել
դրանցով, ճի՞շտ է:
Իսկ եթե
այս գրքերը չունես,
լավ կլինի,
որ ունենաս:

ԽԽՈՒՆՁՆ ՈՒ ՍՈՒՆԿԸ



Նստեկ էր խխունցը սունկի վրա,
բարկանում էր, նեղանում ու
սսում.

- Էս ի՞նչ է բռչկոտում ճպտոտ
ճպտոռ, ասես չի կարող ինձ
նման հանգիստ նստել:

Թիթեռները բռչկոտում են,
բռչունները թռչում, ու խխունցը
նորից կատապում է.

- Սրանք ինչ են բռչում-
բռչկոտում, ինչ են երգում, էլ
ուրիշ բան ու գործ չունե՞ն: Ա՛յ,
ուրիշ բան են ես, ո՛չ բռչկոտում
եմ, ո՛չ երգում: Թռչելս ո՞րն է,
երգելս՝ ո՞րը:

- Է՛, բույրիկ խխունց,- հառաչում է սունկը,- գիտե՞ս՝ ինչու՞ եմք
լուռ ու մունջ մնացել էստեղ, ո՛չ բռչել գիտենք և ո՛չ էլ երգել:

Օրն ինչպիսի՞ն է: Եհիտ պատասխաններն ընդգծիր.

սրկուր անչրկուր փար գուրբ

Ինչպիսի՞ն է խխունցը: Եհիտ պատասխաններն ընդգծիր.

բարկացկուր զփարք նախանչ բարի փնրփնրան

ԱՍԵՆԱ-ԱՍԵՆԱ...

Լրացրու.


- Այ _____, ի՛նչ խելացի ես:

- Բա ո՞ր խելացի եմ, _____:

ԱՂՎԵՍՆ ՈՒ ՈՋՆԻՆ



- Դու շատ լավն ես, ոզնի՛, բայց փշերը քեզ չեն սագում:
- Ի՞նչ է, աղվես, ես փշերով սիրուն չե՞մ, թե՞ արագ չեմ շարժվում:
- Չէ՛, փշերով դու ուտելու բան չես:



Ինչի՞ համար են ոզնու փշերը:



Ման է գալիս կամաց-կամաց՝
Սի շալակ փուշ վրան առած:



Նախադասություններից ամեն մեկը գրի՛ր իր տեղում:

_____ :

_____ :




Աղվեսի վիճակ իր պոչն է:

*Խորամանկ աղվեսը երկու ուրբով է
բակարդը բնկնում:*



ՋԱՐՄԱՆԱԼԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ



Մրջնանոցը փոքրիկ թագավորություն է: Մրջյունները թագուհի ունեն:

Մրջնանոցի ամբողջ աշխատանքը աշխատավոր մրջյուններն են անում: Նրանք կառուցում են մրջնանոցը, կեր կուտակում: Կան նաև զինվոր մրջյուններ, որոնք ավելի խոշոր են և ուժեղ: Նրանք պաշտպանում են մրջնանոցը:

Մրջյունները ումի՞ց են պաշտպանում մրջնանոցը:

Շարունակիր.

մրջյունի նման աշխատասեր

առյուծի նման ուժեղ

աղվեսի նման

փղի նման

շան նման

նապաստակի նման

կաշաղակի նման



Շաբաթվա օրերը

Շաբաթվա առաջին օրը երկուշաբթին է:

Շաբունակի ր.

Շաբաթվա երկրորդ օրը _____

Շաբաթվա երրորդ օրը _____

Շաբաթվա չորրորդ օրը _____

Շաբաթվա հինգերորդ օրը _____

Շաբաթվա վեցերորդ օրը _____

Շաբաթվա յոթերորդ օրը _____

Շաբաթը _____ օր ունի:

Այսօր շաբաթվա n^ր օրն է:

Երեկ շաբաթվա n^ր օրն էր:

Վաղը շաբաթվա n^ր օրն է լինելու:



ԿՈՆՖԵՏԻ ԱՆՁՐԵՎԸ

Մի անգամ քաղաքում կոնֆետի անձրև էր գալիս: Կոնֆետները կարկուտի նման էին, բայց սպիտակ չէին, այլ գունավոր՝ կարմիր, կապույտ, կանաչ: Մի տղա կերավ կանաչ կոնֆետն ու տեսավ, որ խնձորի էր: Մի ուրիշ տղա էլ կարմիրը փորձեց, ու պարզվեց, որ դա էլ ելակի էր:

- Վա՛յ, իսկական կոնֆետներ են, ինչ լավն են,- ուրախացան երեխաները ու արագ-արագ լցրին գրպանները: Ինչքան էլ նրանք հավաքում էին, մեկ է՝ կոնֆետները չէին վերջանում, անձրևի պես թափվում էին: Կոնֆետները շատ անուշ հոտ ունեին ու ոտքի տակ սառույցի պես խրթխրթում էին: Դարոցից տուն գնացող երեխաներն էլ հասցրին պաշուսակները լցնել: Տատիկներն էլ կոնֆետով զամբյուղներ էին տանում: Իսկական տոն էր:

Քաղաքում մարդիկ սպասում են, որ երկնքից էլի կոնֆետներ կբափվեն: Բայց կոնֆետի ամպը էլ ոչ մի անգամ չի երևացել:





Ինչի՞ համ կունենա կապույտ կոնֆետը:

Ինչի՞ համ կունենա դեղին կոնֆետը:


Ինչի՞ անձրև կուզեիր, որ գար:

Ինչո՞ւ ես այդպիսի անձրև ուզում:

Ճիշտ ավարտիր նախադասությունը.

բերում է, չի բերում

Ամեն անգամ գեպը գերան _____



ԱՄԵՆԱ-ԱՄԵՆԱ...

Լրացրո՛ւ.

- Այ _____, ի՞նչ քաղցր ես:
- Քա որ քաղցր եմ, _____

ՊՈ՞ՉՆ Է ԹԱՆԿ, ԹԵ՞ ԿՅԱՆՔԸ



Դու երևի մողես տեսել ես: Մողեսները ամռանը վազվզում են տաք քարերի վրա: Իսկ բռնե՞լ ես մողեսի պոչից: Այդ ժամանակ նա պոչը թողնում է ու փախչում: Այդպես է մողեսը ազատվում թշնամիներից: Չարմացած թշնամին ուշադիր նայում է շարժվող պոչին, իսկ մողեսը թաքնվում է: Մի քանի շաբաթ հետո հին պոչի տեղը նոր, փոքրիկ պոչ է աճում:

Քո տեսած մողեսները փոքր են: Իսկ, ա՛յ, կան շատ խոշոր մողեսներ: Նրանք կարող են հաղթել անգամ եղջերուին կամ վայրի խոզին: Մեզ մոտ այդպիսի մողեսներ չկան:



Ճիշտ լրացրու նախադասությունները.

փրկվում է, թարփացող, մեծ

Այդպես մողեսը _____ թշնամիներից:

Թշնամին ուշադիր նայում է _____ պոչին:

Կան շատ _____ մողեսներ:



ԱՓՌԱՎՆԵՐՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

Երկու ագռավ ծառի վրա կռվում էին: Նրանք մի կտոր պանիր էին գտել, ուզում էին պանիրը բաժանել:

Մի աղվես տեսավ այդ կռիվն ու կանգնեց ծառի տակ:

- Ինչո՞ւ եք կռվում,-
ասաց,- պանիրը ցած
զցեք, ես հավասար
կբաժանեմ:

Վեճը դադարեց, ագ-
ռավները պանիրը ցած
զցեցին: Աղվեսը վերց-
րեց, երկու կտոր արեց:
Նա կտորները դրեց իր
թաթերի վրա, կշռեց:

- Այս մեկը մի քիչ
ծանր է,- ասաց նա ու
կծեց այդ կտորից, որ
հավասարեցնի: Հետո

նորից կշռեց իր թաթերի վրա: Հիմա էլ մյուս կտորն էր ծանր: Մի քիչ
էլ դրանից կծեց, որ հավասարեցնի: Այդպես քիչ-քիչ կծելով՝ երկու
կտոր պանիրն էլ կերավ ու սուսիկ-փուսիկ գնաց իր գործին:

Ագռավները մնացին զարմացած:





Ինչպիսի՞ն էին ազոավները: Ճիշտ պատասխաններն ընդգծիր.

կովարար հաշար խելացի անխելք

Ինչպիսի՞ն էր աղվեսը: Ճիշտ պատասխաններն ընդգծիր.

խորամանկ միամիտ արդար անարդար

Լրացրու:

Աղվեսը կարողացավ ազոավներին խաբել, որովհետև

_____ :

խորհուրդ տուր ազոավներին:

Գրիր ճիշտ բառը.

երկու, մեկ

_____ **չեռքը ծափ չի փախա:**



ԱՄԵՆԱ-ԱՄԵՆԱ...

Լրացրու.

- Այ _____, ի՞նչ խորամանկ ես:
- Բա որ խորամանկ եմ, _____ :

ՊԱՐՈՂ ՈՐՍՈՐԴԸ

Աղվեսը շատ լավ է լսում: Դա օգնում է, որ նա իր համար կեր գտնի:

Երբեմն աղվեսը ետևի թաթերի վրա է քայլում, ցատկոտում է ու պտտվում: Բայց նա ոչ թե պարում է, այլ ականջ է դնում ձյան տակ վազվզող մկների ծվծվոցին: Եվ ամենաթույլ ծվծվոցից էլ աղվեսը գտնում է մկանը:



Ուրիշ ի՞նչ գազաններ գիտես: Գրի՛ր նրանց անունները:


Աղվեսն ինչո՞ւ է թաթերի վրա քայլում, ցատկոտում ու պտտվում:

Շարունակի՛ր լրացնել վանդակները:

մծեղ	ք	ու	յ	լ
փխտր	ու			
չոր	ք			
հիվանդ	ա			
երկար	կ			



ԿԱՐՄՐԱԿԱՏԱՐԻԿԸ



Աստված թռչուններին ուրբեր տվեց, որ ցատկոտեն: Թներ տվեց, որ թռչեն: Կտուց տվեց, որ կացեն, ուտեն ու երգեն: Հետո վերցրեց ներկերն ու սկսեց ներկել նրանց փետուրները: Աղավնին կապույտ դարձավ, դեղձանիկը՝ դեղին, ագռավը՝ սև: Այդպես բոլոր թռչունները գույներ ստացան: Երբ Աստծու բոլոր գույները վերջացել էին, մի թռչուն էլ եկավ: Նա շատ տխրեց, որ բոլորը գեղեցիկ գույներ ունեն, իսկ ինքը չունի: Աստված նրան խղճաց, ներկուտ աման-

ների պատերը քերեց ու քամսեց այդ թռչունի փետուրներին: Մի քիչ կապույտ եղավ, մի քիչ՝ դեղին, մի քիչ՝ կանաչ, գլուխն էլ՝ կարմիր:

Ահա թե ինչու աքաղաղը գույնզգույն է ու կարմիր կատար ունի:

Ի՞նչ գույն ունեն քեզ ծանոթ թռչուններն ու կենդանիները:

Մորուքը բոց է,
Թագը սոց է:

ա _ ա _ ա _



Նայի՛ր Գեարձերիճ

և դրանց տակ գի՛ր տողերը

3. - Ծուղրուղո՛ւ,-

Խոսեց ծեղին երկրորդ բերան.

6. - Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ,-

Նստեց նանը տեղի միջին:

1. - Ծուղրուղո՛ւ,-

Արյորը զի կանչեց բառին:

4. - Հո-հո՛ , հո-հո՛ ,-

Նախիրն արդեն հանդը փարան:

5. Ծուղրուղո՛ւ.

Լույսը բացվեց երրորդ կանչին:

2. - ճի՛կ-ճի՛կ, ճի՛կ-ճի՛կ,-

Չարքնեց մրկում ծիպը ծառին:



Ծուղրուղո՛ւ

1



Ծուղրուղո՛ւ

2



Ծուղրուղո՛ւ

3



ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԷՇԻ ԱԿԱՆՋՆԵՐԸ ՄԵԾ



Աստված մի օր կանչում է կենդանիներին, որ խելք բաժանի: Բոլորը գալիս են, իրենց բաժինը վերցնում: Էշն ուշացած է գալիս: Աստված նրան տալիս է իր մոտ մնացած մի փոքր կտոր խելք: Էշը շատ է տխրում:

- Ոչինչ,- ասում է Աստված,- վաղը ականջներ եմ բաժանելու, շուտ կգաս: Մյուս օրը էշը շտապում է և առաջինն է հասնում Աստծու մոտ:

Աստված մեծ-մեծ ականջները տալիս է նրան: Դրա համար էլ էշի խելքը քիչ է, իսկ ականջները մեծ են:



Գրի՛ր ճիշտ բառը.

ընկույզ, ձմերուկ

Մի ձեռքով երկու

չես կարող բռնել:

Շարունակիր լրացնել վանդակները: Պահանջվող բառերը քեզ լավ ծանոթ են մաթեմատիկայի դասերից:

բարձր -

երկար -

մեծ -

շատ -

աջ -

հաջորդ -



ԻՆչը իՆչ ուԼՈՒ

Գիրքը _____



Հեռախոսը _____




Խնձորը _____



Ավտոմեքենան _____




Ինքնաթիռը _____



Ծառը _____




Քեզ բարձրաձայն է կանչում,
Բայց խոսքն ականջիդ է ասում:



ՄԵՂՈՒ

Պզգան, պզգան,
 Պզպզան,
 Պստիկ մեղու տզտզան,
 Դաշտ ու հովիտ կշրջես,
 Բարձր սարեր կթռչես,
 Սուսան սմբուլ կծծես
 Ու ոտքերով թավամագ
 Փոշի առած՝ տուն կգաս:



Մեղուն ինչպիսի՞ն է: Ճիշտ պատասխաններն ընդգծիր.

մեծ փոքր լուռ շապախոս ծույլ աշխատասեր



Արտագրիր այն տողերը, որոնցում ասվում է, որ մեղուն շատ է ման գալիս:

Շարունակիր լրացնել.

որջ բույն փերակ գոմ ավարտանակ

Մեղուն ապրում է փերակ ում:


Արջը ապրում է _____ ում:

Թռչունը ապրում է _____ ում:

Կովը ապրում է _____ ում:



Փայտիկներով լի
 Փոքրիկ դարակ է,
 Ամեն փայտիկը
 Մի-մի կրակ է:



ՓԵԹԱԿՈՒՄ

Մեղուները շատ աշխատասեր են:

Փեթակում ամեն մեղու իր աշխատանքն ունի: Մի մասը կեր է բերում: Մյուսները դալցում են մեղրահացերի մեջ: Մի խումբ մեղուներ մաքրում են մեղրահացերը: Մյուս խումբը թափահարում է թևիկները և օդափոխում փեթակը: Մեղուները ունեն նաև պահակներ: Նրանք պահպանում են մուտքը: Միայն մայր մեղուն չի աշխատում: Բոլորը խնամում են նրան: Փեթակում միայն նա է ձվեր դնում: Հետո դրանցից մեղուներ են դուրս գալիս:



Մեղուներն ու մրջյուններն ինչո՞վ են իրար նման:

ԱՄԵՆԱ-ԱՄԵՆԱ...

Լրացրո՛ւ.

- Այ՛ մեղու, ի՞նչ աշխատասեր ես:
- Բա որ աշխատասեր եմ.



ՈՎ ԱՇԽԱՏԻ, ՆԱ ԿՈՒՏԻ

Մի տնակում ապրում էին մուկիկը,
ծիտիկը և հավիկը:

Մի օր քուջուջ անե-
լիս հավիկը մի հատիկ
գտավ ու կանչեց.

- Հատիկ եմ
գտել, հատիկ եմ
գտել: Ո՞վ
կտանի աղալու:

- Ես՝ չէ,- ասաց
մուկիկը:

- Ես էլ՝ չէ,- ասաց
ծիտիկը:

Ի՞նչ աներ հավիկը: Հատիկը ջրաղաց տարավ, աղաց:

- Այլուրն ո՞վ տուն կտանի,- հարցրեց հավիկը:

- Ես՝ չէ,- ասաց ծիտիկը:

- Ես էլ՝ չէ,- ասաց մուկիկը:

Հավիկը այլուրը շալակեց, տուն տարավ:

- Ո՞վ խմոր կանի,- հարցրեց հավիկը:

- Ես՝ չէ,- ասաց մուկիկը:

- Ես էլ՝ չէ,- ասաց ծիտիկը:

Հավիկը խմոր հունցեց:

- Թոնիքը ո՞վ կվառի,- հարցրեց հավիկը:

- Ես՝ չէ,- ասաց ծիտիկը:

- Ես էլ՝ չէ,- ասաց մուկիկը:

Հավիկը թոնիքը վառեց:

- Հացն ո՞վ կթխի,- հարցրեց հավիկը:

- Ես՝ չէ,- ասաց մուկիկը:

- Ես էլ՝ չէ,- ասաց ծիտիկը:

Հավիկը հացը թխեց, դրեց սեղանին:

- Հացն ո՞վ կուտի,- հարցրեց հավիկը:

- Ես,- գոչեց ծիտիկը և մտտեցավ սեղանին:



- Ես,- գոչեց մուկիկը և մոտեցավ սեղանին:
Հավիկը նրանց սեղանից հեռացրեց և ինքը մենակ կերավ հացը:



Լրացրո՛ւ:

Հայրիկը աղում են, սպասվում է _____ :

Այլուրը ջրով հունցում են, սպասվում է _____ :

Խմորը թխում են, սպասվում է _____ :

Ինչպիսի՞ն են մուկիկն ու ծիտիկը:

_____ :

Ինչպիսի՞ն է հավիկը:

_____ :

Մուկիկին ու ծիտիկին խորհուրդ տուր:

_____ :

ճիշտ ավարտի՞ր նախադասությունը.

չես հնչի, կհնչես

Ինչ որ ցանես, այն _____ :

Նախադասությունը լրացրո՛ւ տրված բառերով.

հիվանդ է, առողջ է

Ծույլը հաց ուտելու ժամանակ _____, աշխատելու
ժամանակ _____ :



ԻՈՅՁ ԻՈՅ Է ՈՒՆՈՒԾ



Նապաստակը


գազար

է

ուլուն




[] [] [] []




[] [] [] []



[] [] [] []



[] [] [] []



ՍԿՅՈՒՌՆ ՈՒ ԱՐՋԸ

- Ես սունկ եմ հավարում, որ ձմռանը ուտեմ: Իսկ դու, ա՛յ արջ, անգործ ման ես գալիս: Բա ձմռանը ի՞նչ ես ուտելու:

- Մի՛ վախենա, սկյուռիկ ջան: Ես անտառում իզուր չեմ թափառում: Մաշկիս տակ ճարպ եմ կուտակում ու ձմռանը այդ ճարպով եմ ապրում:



Ձմռանը ճնճողուկները ի՞նչ են անում:

Նախադասություններից ամեն մեկը գրի՛ր իր տեղում:

Հաչան շունը կծան չի լինում:

Աստղին լսող է պեպք:

ԱՄԵՆԱ-ԱՄԵՆԱ...


Լրացրո՛ւ.

- Ա՛յ _____, ի՛նչ քնկոյ ես:

- Բա որ քնկոյ եմ, _____



ԱՐԵՎԻՆ



Արև, արև, եկ, եկ,
Զիզի քարին վեր եկ,
Սև-սև ամպեր, հեռացե՛ք,
Արևին ճամփա տվեք:

Թողեք նա գա մեզ մոտ,
Նրա լույսին ենք կարոտ,
Կարմիր արև, եկ, եկ,
Զիզի քարին վեր եկ:

Արևը հաղթեց ամպերին,
Շողոր գցեց սարերին,
Զիզի քարը տես, տես՝
Պսպղում է ոսկու պես:





Ինչպիսի՞ն է քարը:

_____ :

Ինչպիսի՞ն են ամպերը:

_____ :

Ինչպիսի՞ն է արևը:

_____ :

Ովքե՞ր են կանչում արևին:

_____ :

Արտագրի շարունակությունը.

Արևը հաղթեց ամպերին,

Բառերը ընտրի՛ր և տեղավորի՛ր իրենց վանդակներում:

քաղավոր, սիրուն, երեկո, ճերմակ, ուրախ

լուսարաց

արքա

սպիտակ

իրիկուն

գեղեցիկ

զվարթ

ա	ռ	ա	վ	ո	յ



Նայի՞ր Ծկարներին

և դրանց տակ գրի՛ր տողերը

2. Շողբը երդից ներս է
բնկել շողշողալով:

3. Ծիպը ծառին



կշկշում է ծլվլալով:

5. Ծույլ փղայի բունն է
փարեղ խոնփալով:

6. Տրեխները շունն է
փարեղ մոմռալով:


1. Արեգակը դուրս է
նկել պսպղալով:

4. Զորում ստուն քչքչում է
վշկշալով:



Գիտե՞ի՞ր 7. Աղայանի «Առավոտը գյուղում» բանաստեղծությունը...

ԵՂՐԱՅՐՆԵՐԸ



Ասում են, թե շատ առաջ մեր լեռները հսկա եղբայրներ են եղել: Առավոտյան նրանք շուտ են արթնացել: Սկզբում կապել են իրենց գոտիները, հետո են բարևել իրար: Ժամանակ է անցել, ու եղբայրները ծերացել են: Նրանք էլ չեն կարողացել շուտ արթնանալ: Մի օր էլ ուշ են վեր կացել ու մոռացել են կապել գոտիները: Իրար բարևել են առանց գոտիները կապելու: Դրանից նրանք քարացել, սարեր են դարձել: Նրանց գոտիները դարձել են կանաչ դաշտեր, իսկ արցունքները դարձել են աղբյուրներ:

Բառերը գրի՛ր իրենց տեղերում.

արթնանալ, արթասուր, առավոտ

լեռ - սար

տեսնել - նկատել

լուսարաց - _____

զարթնել - _____

արցունք - _____



Ի՞նչ սարեր գիտես. գրի՛ր դրանց անունները.



ՍՈՒՏԱՍԱՆԸ

- Ով էնպես սուր ասի,
որ ես ասեմ՝ սուր է, իմ
թագավորության կեսը
կտամ նրան:



- Թագավորն ասրած
կենա, իմ հերը մի փայտ
ունեք, որ էսրեղից մեկնում էր,
երկնքում ասրդերը
խառնում:



- Ապարտախի: Իմ պապն
էլ մի շիրուխ ունեք. մի ծերը
քերանին էր դնում, մյուս ծերը
մեկնում, արեգակից
վառում:



- Ներողություն, թագավոր,
ես շուր պիրի գայի, ուշացա: Երեկ
շաբ աւնչրե եկավ, կայծակները
տրաքեցին, երկինքը պատռվեց,
զնացել էի կարկապելու:





- Հա՛, լավ ես արել, բայց լավ չէիր կարկարել. էս առավոտը մի քիչ անչրև թափվեց:



- Ինչ մի կոտր ոսկի ես պարտք, եկել եմ՝ տասնեմ:

- Մի կոտր ոսկի՞: Սուր ես ասում, ես քեզ ոսկի պարտք չեմ:



- Թե որ սուր եմ ասում, թագավորությանդ կեսը տո՛ւր:



- Չէ՛, չէ՛, ճշմարիտ ես ասում:



- Ճշմարիտ եմ ասում՝ մի կոտր ոսկի տո՛ւր:





Մի քանի սուտ հորինիր.

_____ :
_____ :
_____ :

Շարունակիր. ի՞նչ են անում:

Գերջակը շոր է կարում:

Հովիվը _____ :

Բժիշկը _____ :

Ուսուցիչը _____ :

Իմ հայրը _____ :

Իմ մայրը _____ :

Հերիաթի թագավորին նամակ գրիր.

Թագավորն ապրած կենա, _____ :
_____ :

Մրանք «Սուրասանը» հերիաթի հերոսներն են: Գու կարող ես սրանցով փիկնիկներ պատրաստել:



ՃԱՍՓՈՐԴՆԵՐ

Բսկում



- Քույի՛ ախպեր, կարելի է դու գիտենաս՝ էն սարի ետերը ինչ կա:

- Ես էլ չգիտեմ:



- Հասցա միևնույն ե՞րբ պիտի այսպես մնանք. արի գնանք, տեսնենք՝ աշխարհումս ինչ կա, ինչ չկա:



- Լավ:



- Խոսքը մեկ արին ու փախան:
Գնացին, գնացին, իրիկունը
հասան մի անտառ:

Անբարոճում



- Ծուղրուղր՜:

- Վա՛հ, սա որտեղի՞ց
դուրս եկավ, ա՛յ լավ
նախանաչիկ: Բարի լույս,
սանահե՛ր արջոր: Ի՞նչ ես
շինում այս կողմերը:



- Գնում եմք աշխարհ
տեսնելու:

- Օ՛, ի՛նչ լավ բան եք
մտածել: Ինչքա՛ն ժամանակ է՛ ես
էլ մի կարգին ընկեր եմ մասն գալիս:
Ի՛նչ լավ էր՝ պատրասեցինք: Դե՛,
ցած արի, որ չուշանանք:



- Ես համաշայն եմ, տե՛ս,
թե ընկերս էլ համաշայն է,
ցած գամ, գնանք:



- Որտե՞ղ է ընկերդ:



- Էն թփի տակին:



- Սրա ընկերն էլ երևի
իր անան արլոր կլինի, էս
էլ իմ ճաշը:



- Աղվեսը վազեց թփի կողմը:
Հանկարծ որ շունը դուրս եկավ,
աղվեսը, պո՛ւկ, փախավ, ո՛նց
փախավ:

- Կա՛ց, աղվես՝ ախպեր, մի՛
շրտապիր, մենք էլ ենք գալիս,
էդպես ընկեր չի լինի:





Իսկ դու գիտե՞ս, թե աշխարհում ինչ կա, ինչ չկա: Պատմիր:

Մի թագավոր կա՝
Կարմիր թագիկ ունի,
Դեղին՝ տոտիկ:



Նախադասություններից ամեն մեկը գրի՛ր իր պեղում:

Սովաժ հավը երազում կորեկ է պեկում:

Մլավան կապուն մուկ չի բռնում:

Պապմիր ախորվա եղանակի մասին:

Առավոտյան

Կեսօրին

Երեկոյան



Ես արդեն շատ լավ եմ գրում: Մի քիչ էլ պատմեմ իմ մասին:

Ո՞ր կենդանուն եմ ես նման: Ինչո՞ւ:

Մեր ընդամենը

Մեր դասարանը

Իմ ընկերը

Ամենից շատ սիրում եմ

Ես չեմ սիրում



Ուրախանում եմ, երբ

Տիրում եմ, երբ

Չարմանում եմ, երբ

Ես շատ կուզեի, որ

Իմ մայրիկը բարկանում է, երբ

Ինչո՞ւ

Ինչո՞ւ

Ինչո՞ւ

Մի անգամ մեր ընտանիքով

Կեսօրին

Երեկոցին



Բարի կախարդին կիսնդրեի, որ

Նամակ

ին



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տիրուհի հմ. կրք

Չարմանուհի հմ. կրք

Մանուշակ..... Ղազարոս Աղայան	4
Եղևնին.....(Ժողովրդական)	5
Երկու ձագուկ.....(ըստ Ղ. Աղայանի)	6
Փոքրիկ տղան.....(Ժողովրդական)	7
Արևը.....(Ժողովրդական)	8
Կրակի գունդը.....(հանրագիտարանային)	9
Իմ հարազատները	10
Քամին.....Հովհաննես Թումանյան	11
Օդ.....(հանրագիտարանային)	12
Առաջին ձյունը.....Հովհաննես Թումանյան	13
Անձրև.....(հանրագիտարանային)	14
Տարվա եղանակները	15
Կամակոր այծիկները.....(ըստ Ղ. Աղայանի)	16
Արտույտն ու երկինքը.....(Ժողովրդական)	17
Ի՞նչ եմ արել, ի՞նչ եմ անելու	18
Արտուտիկ.....Հովհաննես Թումանյան	19
Չալ կաչաղակը.....Աթաբեկ Խնկոյան	20
Բարեկամը.....(Ժողովրդական)	21
Թռչունի անկողինը.....(ըստ Ն. Սլադկովի)	22
Ուժեղը.....(Ժողովրդական)	23
Փիղ.....(հանրագիտարանային)	24
Իմ ընկերներն են	25
Քա՞ջ է, թե՞ վախկոտ.....(հանրագիտարանային)	26
Կռունկները.....Հովհաննես Թումանյան	27
Նամակատարներ.....(ըստ Ն. Սլադկովի)	28
Ով ինչպես է քնում.....(ըստ Ն. Սլադկովի)	29

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արթուր Գևորգյան

ԸՆԹԵՐՅԱՐԱՆ

Մարտինի գիտություն

Խխունջն ու սունկը.....Աթաբեկ Խնկոյան	30
Աղվեսն ու ոզնին.....(ըստ Ն. Մլադկովի)	31
Չարմանալի թագավորությունը	32
(հանրագիտարանային)	
Շարաթվա օրերը	33
Կոնֆետի անձրևը.....(ըստ Ջ. Ռոդարու)	34
Պո՞չն է թանկ, թե՞ կյանքը.....(հանրագիտարանային)	36
Ազոավներն ու աղվեսը	37
(ըստ Լ. Շանթի «Մանկական աշխարհ» ընթերցարանի)	
Պարող որսորդը.....(հանրագիտարանային)	39
Կարմրակատարիկը	40
(ըստ Լ. Շանթի «Մանկական աշխարհ» ընթերցարանի)	
Նայիր նկարներին.....	41
Ինչո՞ւ են էշի ականջները մեծ.....(ժողովրդական)	42
Ինչը ինչ ունի.....	43
Սեղու.....Աթաբեկ Խնկոյան	44
Փեթակում.....(հանրագիտարանային)	45
Ով աշխատի, նա կուտի	46
(ռուսական ժողովրդական հեքիաթ)	
Ինչը ինչ է ուտում	48
Սկյունն ու արջը.....(ըստ Ն. Մլադկովի)	49
Արևին.....Ղազարոս Աղայան	50
Նայիր նկարներին.....	52
Եղբայրները.....(ժողովրդական).....	53
Սուտասանը.....(ըստ Հ. Թումանյանի)	54
Ճամփորդներ.....(ըստ Հ. Թումանյանի)	57

ՔԱՂՅՈՒՆԻ ԿԱՐՁՅԱՐԳ

Պատմաբանները..... (Պատմաբանները).....
Գրականագետները..... (Գրականագետները).....
Վարչապետները..... (Վարչապետները).....
Գրողները..... (Գրողները).....
Կոմպոզիտորները..... (Կոմպոզիտորները).....
Գեղարվեստագետները..... (Գեղարվեստագետները).....

Գիրքը կազմեցին՝

Մարիտա Սիմոնյանը

Աիդա Պետրոսյանը

և

Նկարագրեցին՝

Նանա Սահակյանը

և



Մարիետր Միմոնյան
Արդա Պերրոսյան

ԸՆԹԵՐՅԱՐԱՆ

Մայրենիի գիրք-տետր
1-ին դասարանիցիների համար

Խմբագիրներ՝	Սուսան Մարկոսյան Հովհաննես Ալվազյան
Գեղ. խմբագիր՝	Արտակ Բաղդասարյան
Նկարիչ՝	Նանա Սահակյանց
Տեխ. խմբագիր՝	Արման Ալավերդյան
Էջադրող՝	Արմեն Պատվականյան
Սրբագրիչ՝	Արվիկ Համբարձումյան

Մարի-Էմա Միմոնյան
Արքայ-Պետրոսյան

ՀԱՅԿԵՆՏ

Մարի-Էմա Միմոնյան
Արքայ-Պետրոսյան

Գիրքի կազմակերպիչ

Մարի-Էմա Միմոնյան
Արքայ-Պետրոսյան


Հայաստանի Հանրապետության
Մշակույթի նախարարության
Հայաստանի հայագիտական կենտրոնի
Հայաստանի հայագիտական կենտրոնի
Հայաստանի հայագիտական կենտրոնի
Հայաստանի հայագիտական կենտրոնի
Հայաստանի հայագիտական կենտրոնի

Ստորագրված է տպագրության՝ 13.01.1997թ.:
Ծավալը՝ 8,5 տպ. մամուլ: Չափսը՝ 60x84 1/8:
Թուղթ՝ օֆսետ, N 1, 70 գ/մ²:
Տպագրությունը՝ օֆսետ:
Առաջին թողարկում: Տպաքանակը՝ 10 000:



ՀՀ կրթության և գիտության նախարարության
«Նոր դպրոց» հրատարակչություն:
Երևան, Սիմոն Կրաջյանի փ., 73:

Տպագրված է «Արտաշատի տպարան» ՓԲԸ
տպարանում:
Արտաշատ, Մանուշյանի 7:



Դու սիրում ես նվերներ ստանալ, ճի՞շտ է:

Այս խաղը մենք քեզ ենք նվիրում:

Այն շատ պարզ է:

Գլորում ես խորանարդիկը, եւ քանի միավորի վրա կանգնեց՝ այդքան քայլ ես կատարում քո խաղանիշով:

11-ը, 16-ը, 21-ը, 39-ը հաջող թվեր չեն:

Հենց դրանց վրա կանգնեց քո խաղանիշը՝

ստիպված կլինես մի քանի քայլ ետ գնալ սլաքի ուղղությամբ:

Խաղը կարող ես մենակ խաղալ:

Բայց ավելի հետաքրքիր կլինի, եթե տանեցիների կամ ընկերներիդ հետ խաղաս:

Հաջողություն քեզ:

